# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*24 նոյեմբերի 2025 թվականի N 1512*

### ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում նվազագույն գին էր առաջարկել ԱՁ Հրանտ Սեդոյանը և գնահատող հանձնաժողովի կողմից ԱՁ Հրանտ Սեդոյանի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջներին, մասնավորապես՝ դիմում հայտարարությունը (Հավելված 1) հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետով և «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիքով հայտը գնահատվել էր անբավարար և մերժվել:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միաժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով վերեգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով և Կառավարության 2017թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 19-րդ ենթակետով.

## *<u>Ո Ր Ո Շ ՈՒ Մ   Ե Մ՝</u>*

1. ԱՁ Հրանտ Սեդոյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» | 1 | Ծառերի (եղևնիների) | 9.450.000 | ԱՁ Հրանտ Սեդոյան | 40500139 | ՀՀ, ք. Ծաղկաձոր, Խ. Կեչառեցու 7/1 | 12.11.2025 | Հրազդանի Համայնքապետարան | «ԿՄՀՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/58» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետ | Առկա չէ |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

24 նոյեմբերի 2025թ.
ք.Հրազդան